ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը և կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները

Հաստատություն՝ Երևանի հ. 96 <<Հեքիաթ>> մսուր մանկապարտեզ

Դաստիարակ՝ Սահակյան Մարիետա

Ղեկավար՝ Պետրոսյան Քրիստինե

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

1. ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ…….4
2. ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ…. 5
3. ԿԵՐՊԱՐՎԵՍՏ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ……8
4. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ……10
5. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ……12

6 <<ԿԵՐՊԱՐՎԵՍՏ>> ԱՌԱՐԿԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ……21

Եզրակացություն ……24

Օգտագործված գրականության ցանկ ……25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից պայմաններում յուրաքանչյուր ուսումնական բնագավառում ուսումնական գործունեության տեսակները նախագծելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն տվյալ առարկայի գծով գիտելիքների հաղորդման, այլև նախադպրոցական տարիքի երեխայի մեջ նշված հատկանիշների ձևավորման և զարգացման անհրաժեշտությունը:

Իր յուրահատկության, բովանդակության, ինչպես նաև ուսումնական բոլոր առարկաների հետ փոխադարձ կապ ստեղծելու բացառիկ հնարավորության շնորհիվ, կերպարվեստը կոչված է խթանելու մտավոր և հոգևոր ներուժի բացահայտումը, զարգացումը և հարստացումը, ընդհանուր աշխարհայացքի ձևավորումը:

Կերպարվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելը և ինքնուրույն գեղարվեստական գործունեություն իրականացնելը նպաստում է՝

-Իրականության գիտակցական և զգայական ընկալման ձևավորմանը.

-Վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը.

-Անձի ինքնաճանաչմանը, ինքնաարտահայտմանը և մտահորիզոնի ընդլայնմանը.

-Երեխայի գեղարվեստական կրթությանը, գեղագիտական և բարոյական դաստիարակությանը.

-Ազգային-հայրենասիրական և մարդասիրական զգացումների արմատավորմանը:

1. ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Կերպարվեստը՝ որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի սաների համընդհանուր դաստիարակության գործում: Կերպարվեստի դասավանդման ժամանակահատվածում գործնական կարողությունների և գեղարվեստական ընկալման հմտությունների ձեռքբերման ընթացքում սաների մեջ զարգանում են հետաքրքրություններ արվեստի ստեղծագործությունների, ինչպես նաև շրջապատի նկատմամբ գեղեցիկը նկատելու, զգալու և գնահատելու ունակություններ:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կերպարվեստի դասավանդման հիմնական խնդիրներն են՝

ա/սաների բարոյական, աշխատանքային և գեղագիտական դաստիարակության, գեղարվեստական կրթության իրականացումը.

բ/բնօրինակից հիշողությամբ և պատկերացմամբ նկարելու հմտությունների ձևավորումը, զարդակիրառական, ժողովրդական արվեստի հիմնական առանձնահատկությունների իմացությունը.

գ/ երեխաների մոտ կերպարակերտման ընդունակությունների, գեղեցիկի զգացողության զարգացումը, նրանց մոտ գեղեցիկի հասկացողության, գեղարվեստական ճաշակի, ստեղծագործական երևակայության, արվեստի նկատմամբ հետաքրքրասիրության և սիրո դաստիարակումը:

Մանկապարտեզներում կերպարվեստի դասավանդման հիմնական նպատակն է Երեխաներին ծանոթացնել հարթապատկերային ձևերին, գույների համադրությանը, տարբեր նյութերով աշխատելու կարևորության և հմտության զարգացմանը, բնական և ոճավորված ձևերի բնորոշ հատկությունների տարբերակմանը: Երեխաները սովորում են անվանել նկարելու համար ընտրված առարկաները, նրանց գույները, ծանոթանում են սառը և տաք գույներին, ինչպես նաև գուներանգներին:

Հետագայում դաստիարակը ևս շարունակում է զարգացնել գունային ներդաշնակ զուգակցումներ ստեղծելու կարողությունները: Կերպարվեստի պարապմունքները

սաներին օգնում են զգալու շրջապատող աշխարհի ամբողջ գունային հմայքը, հարստացնում են նրանց հոգեպես, զարգացնում են գեղագիտական ճաշակը:

Այն կոչված է դասավանդման ընթացքում երեխաների բազմակողմանի զարգացմանը օժանդակելուն, հոգևոր աշխարհի հարստացմանը: Որպես հիմնական ուսումնասիրման նյութ կարելի է ընդգրկել .

- -զրույցներ գեղանկարչության՝ որպես կերպարվեստի տեսակներից մեկի մասին/
- -ծանոթություն հայ և արտասահմանյան նկարիչների աշխատանքներին,
- -մանկական գրքերի նկարազարդումները,
- -հայկական մանրանկարներ,զարդա-կիրառական արվեստ:

2.ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Նախադպրոցական կրթության շրջանակներում կերպարվեստի դասավանդման հիմնական նպատակներն են. Օգնել երեխաներին՝

- - ճանաչել և պատկերել որոշ երկրաչափական պատկերներ, ունենալ պարզ տարածական պատկերացում,
- - կառուցել ֆիզիկական պարզ մոդելներ,
- - բերել պարզ հիմնավորումներ, կատարել ընդհանրացումներ և պարզ դասակարգումներ,
- - դրսևորել տրամաբանական և ստեղծագործական մտածողության պարզ հմտություններ և կարողանալ անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին,
- - հասկանալ իր առջև դրված խնդիրները, մշակել և կատարել քայլեր դրանք լուծելու համար,
- - ճանաչել շրջապատող աշխարհը, զարգացնել նրանց դիտողականությունը՝ ձևավորելով ստեղծագործական և տրամաբանական մտածողություն,

- - գտնել իր սխալները և ձգտել դրանք ուղղել ինքնուրույն կամ աջակցությամբ.
- - կիրառել տարբեր եղանակներ նյութը պատկերավոր և ընկալելի ներկայացնելու համար,
- - ճանաչել և հարգի ՀՀ պետական խորհրդանիշները և իմանա պետական տոների հիմնական բովանդակությունը,
- - արդյունավետ համագործակցել և հաղորդակցվել տարբեր ձևաչափերով, լսելով և հասկանալով այլոց կարծիքը, արտահայտելով սեփական տեսակետը:

Ձևավորել՝

- - տրամաբանական, ստեղծագործական և քննական մտածողության պարզ հմտություններ,
- - սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքներին անդրադառնալու և արձագանքելու կարողություններ,
- - իր առջև դրված խնդիրը մշակելու և այն լուծելու համար քայլեր կատարելու կարողություն,
- - շրջակա աշխարհի օբյեկտների, երևույթների և դրանց փոխադարձ կապերի մասին գիտելիքներ և դրանք նկարագրելու կարողություններ,
- - պարզ ուսումնասիրություններ, առաջադրանքներ, եզրակացություններ կատարելու հմտություններ,
- - նյութը պատկերավոր և ընկալելի ներկայացնելու համար ստեղծագործական տարբեր եղանակներ կիրառելու կարողություն,
- - տարբեր ձևաչափերով արդյունավետ համագործակցելու և հաղորդակցվելու այլոց կարծիքը լսելու և արձագանքելու կարողություններ,
- - ընտանեկան, խմբային, ազգային և քաղաքացիական պատկանելիության վերաբերյալ պարզ մեկնաբանություններ կատարելու կարողություններ,
- - զգայարաններով ստացած տեղեկությունների, որպես աշխարհաճանաչողության միջոցի ընկալում,

- - իր զգացմունքների ճանաչման, սեփական մտքերի, զգացմունքների, կարիքների և ցանկությունների արտահայման կարողություններ և յուրահատուկ լինելու գիտակցություն,
- - պարզ հիմնավորումներ, ընդհանրացումներ և դասակարգումներ կատարելու հմտություններ,
- - շրջապատող աշխարհի ճանաչողության գիտական ընկալման և մարդու և բնության վրա գիտության ձեռքբերումների ազդեցության գիտակցում,
- - նախնական գիտելիքներ Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի, ազգային արժեքների մասին,
- - այլ ազգերի, ավանդույթների, արժեքների նկատմամբ հետաքրքրություն և հարգանք,
- - անհատական կամ խմբային գեղարվեստական գործունեությամբ զբաղվելու հմտություններ,
- - նախնական գիտելիքներ Հայաստանի պատմության, մշակույթի, ազգային արժեքների մասին,
- - փորձարկելու, հետազոտելու, երևակայելու, ձևավորելու, սեփական գաղափարներն ու զգացմունքներն արվեստի միջոցով արտահայտելու հմտություններ:

3.ԿԵՐՊԱՐՎԵՍՏ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Դասընթացն իրականացվում է երկու հիմնական բաժիններով՝ ստեղծագործական գործունեություն և արվեստի միջոցով իրականության ընկալում:

Գեղարվեստական գործունեություն՝ գծանկար, գունանկար, ծեփ, հորինվածք, տպագրություն/դաջվածք, դեկորատիվ գործունեություն, ավարտուն աշխատանքներ և ցուցադրություններ: Գաղափարների հավաքագրում, ստեղծագործական աշխատանքների կատարման պայմանների, մոտեցումների և միջոցների ուսումնասիրություն, անհրաժեշտ նյութեր և գործիքներ: Կերպարվեստի տարրերի և դիզայնի սկզբունքների ուսումնասիրություն, բնօրինակից, հիշողությամբ կամ երևակայությամբ տարբեր առարկաների պատկերում:

Արվեստի միջոցով իրականության ընկալում՝ ստեղծագործական աշխատանքների մեկնաբանություն, վերլուծություն, քննում, գնահատում և արժևորում: Արվեստի ստեղծագործությունների նշանակության, նպատակների, իմաստի ուսումնասիրում: Արվեստագետների դերը հասարակության մեջ: Տարբեր ժամանակաշրջանների արվեստի տեսակների, ժանրերի, ձևերի, ոճերի և ուղղությունների ուսումնասիրում: Տեխնոլոգիական նորարարությունների դերը արվեստի բնագավառում: Արվեստագիտական տարբեր մասնագիտություններ: Արվեստի ուսումնասիրումը և մյուս առարկայական բնագավառները: Արվեստի կապը գիտության մյուս ճյուղերի հետ:

4.ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Արվեստի կենտրոն

Արվեստի աշխատանքային կենտրոնը երեխաներին խրախուսում է հետազոտելու և զարգացնելու իրենց ստեղծագործական ունակությունները, զվարճանալու նոր նյութերով, դրսևորելու իրենց զգացմունքները: Այս տարածքում օգտագործվող նյութերից կարող են լինել ներկերը, թուղթը, մկրատը, գունավոր մատիտները, կավիճը, գործվածքը կամ նյութերի կտորտանքը՝ սոսնձելու և փակցնելու համար: Այստեղ կարող են ավելացվել նաև բնական նյութեր, օրինակ՝ փայտ, տերևներ, ավազ, եղևնու կոներ և այլն:

Այս կենտրոնում խրախուսվում է ստեղծագործական ինքնուրույնությունը, խոսքային և ոչ խոսքային հաղորդակցությունը, սեփական արժանապատվության գիտակցումը, մանր և մեծ շարժողական հմտությունների զարգացումը, մտավոր ունակությունների խթանումը: Արվեստի կենտրոնը նպաստում է երեխաների գեղագիտական դաստիարակությանը և օգնում է երեխաների մոտ սեր արթնացնելու արվեստի նկատմամբ;

Արվեստ (կերպարվեստ, երաժշտություն)

Նպատակը ՝

Նկարելու, ծեփակերտման, օրիգամիի, սոսնձման եղանակով արգասաբեր գործունեության կազմակերպում, նորանոր ինքնաշեն նյութերով խաղերի հարստացում, տարբեր նշանակության նյութերի համադրում, կոմպոզիցիայի ստեղծում, սեփական աշխատանքներով գրքերի կազմում:

Զգայական փորձով նորությունների հայտնաբերում, համակցված պարապմունքների կազմակերպման ժամանակ արվեստների կարևորում թե՛ գեղագիտական ճաշակի ձևավորման, թե՛ բուժական թերավպիայի ուղղությամբ:

Անհրաժեշտ նյութեր՝

Ներկեր, թղթեր, գունավոր թղթեր, նկարակալ, վրձին, մկրատ, մատիտ, կավիճ, կտորեղեն, գործվածքեղեն, մետաղալարեր, բնական նյութեր (տերևներ, կոներ, ծաղիկներ, ավազ, ապարներ, սոսինձ, ծեփոն (պլաստիլին), նկարիչների աշխատանքներ, նկարներ պատերի ձևավորման համար, երգահանների նկարներ, ստեղծագործություններ, երաժշտական գործիք-խաղալիքներ, տոնական հագուստ, աքսեսուարներ)

Նպաստում է՝

Ստեղծագործական, իրենց սեփական փորձը հետազոտելու կարողությունների, խոսքային և ոչ խոսքային հաղորդակցական հմտությունների զարգացմանը, ինքնագնահատմանը, փոքր մկանային խմբերի զարգացմանը, նորանոր աշխատանքների ստեղծման նպատակով ոգեշնչմանը և խանդավառմանը, ճկուն և ռիթմիկ պարային քայլքին:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ կերպարվեստով զբաղվելիս տեղի է ունենում ձեռքերի մանր մոթորիկայի աստիճանական կատարելագործում: Պատկերման գործընթացը երեխայից պահանջում է ձեռքերի հմտության բաղկացուցիչների ձևավորվածության որոշակի մակարդակ՝ տեխնիկական հմտություններ, ձևավորող շարժումների յուրացում, նկարչական շարժումների կարգավորում՝ ելնելով ուժից և արագությունից: Այս ունակությունների ավելի վաղ զարգացումը ապահովում է պատկերային գործունեության հաջող յուրացում, նպաստում այդ գործունեության նկատմամբ հետաքրքրության աճին, ինչպես նաև նպաստավոր պայմաններ ստեղծում երեխայի անհատականության համակողմանի զարգացման համար:

5.ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գեղագիտական դաստիարակությունը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ ուղղված երեխայի գեղագիտական ընկալումների, կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը:

Կերպարվետի ծրագրային խնդիրների հաջող լուծումը պայմանավորված է ամենից առաջ այն մթնոլորտով և զարգացնող միջավայրով, որոնք ստեղծում է դաստիարակը՝ հաշվի առնելով իր խմբի երեխաների անհատական, հոգեբանական առանձնահատկությունները, նախասիրություններն ու կարիքները: Մանկապարտեզում անցկացվում են կերպարվեստի հետևյալ պարապմունքները՝ նկարչություն, ծեփ, ապլիկացիա և կառուցողական աշխատանք:

Նախադպրոցականի համար նկարչությունը նույնքան բնական պահանջմունք է, որքան խաղը: Նկարչությունը ոչ միայն փոքրիկի զգացմունքի արտահայտումն է, այլև միջոց՝ ճանաչելու շրջապատը: Միաժամանակ նկարչությունը կատարում է նաև զարգացնող դեր՝ հարստացնելով և ճշգրտելով երեխաների աշխարհընկալումը:

Երեխան սկսում է նկարել դեռ վաղ մանկությունից: Սկզբում խզբզելով նա մեծ բավականություն է ստանում իր ձեռքի շրջանաձև շարժումներից, ստեղծած պատկերներից և դրանց անուններն է տալիս: Հետո նկատում է այլոց նկարածը, երկուսի միջև զուգահեռներ է անցկացնում, ձգտում իր նկարածը նույնպես ճանաչելի ու հասկանալի դարձնել ուրիշներին, հաղորդել իր զգացմունքները և վերաբերմունքն իրականության նկատմամբ՝ գույնի, գծի և նախշի միջոցով: Դաստիարակի խնդիրն է՝ երեխային սովորեցնել ոչ թե կրկնել ուրիշների պատկերացումները, այլ ունենալ սեփական գունային ընկալում և դրանով արտահայտել միտք կամ տրամադրություն: Այս տարիքում իրականացվում են նկարչության հետևյալ տեսակները՝ առակայական (բնօրինակից), դեկորատիվ, թեմատիկ և ստեղծագործական (մտահղացմամբ):

Բնօրինակից նկարչությունը նկարելու ամենաբարդ տեսակն է: Այն հիմնվում է բավարար զարգացած աչքաչափի վրա: Որպես բնօրինակ օգտագործվող նմուշը պետք է

տեղադրվի որքան հնարավոր է մոտ երեխաներին և բնօրինակի վերլուծությունն անցկացվի պարապմունքից առաջ: Խիստ կարևոր է, որ երեխաներն աշխատելուց հետո կարողանան համեմատել իրենց աշխատանքը բնօրինակի հետ, գտնեն դրական կողմերն ու թերությունները:

Դեկորատիվ նկարչության միջոցով իրականացվում են մի շարք խնդիրներ.

• երեխաները յուրացնում են դեկորատիվ նախշի պատկերման տարբեր եղանակների պարզագույն տարրեր,

• սովորում են դրանք ճիշտ ձևով տեղադրել թղթի վրա (պահպանել ռիթմը, հաջորդականությունը, գունային ներդաշնակությունը),

• հետաքրքրություն է ձևավորվում կիրառական արվեստի նմուշների նկատմամբ,

• զարգանում է երեխաների ճաշակը: Անհրաժեշտ է երեխաներին բացատրել, որ նախշը չի սիրում ո՛չ շատ խտություն, ո՛չ էլ բաց տարածություն:

Հատկապես կարևոր է ռիթմի պահպանումը. ռիթմը նախշի հիմքն է: Երեխաները սովորում են, որ վրձնահպումներով, կետիկներով, շրջանակներով, ուղիղ և ալիքաձև գծերով կարելի է պատկերել տարբեր նախշեր:

Թեմատիկ նկարչությունը երեխաներին սովորեցնում է նկարել ոչ թե առարկա, այլ սյուժետային թեմա (մի քանի առարկաներ, պատկերներ)՝ վրձնի և ներկի օգնությամբ: Դրա շնորհիվ երեխաները ձեռք են բերում նոր ունակություններ ու հմտություններ՝ կողմնորոշվել թղթի վրա, պատկերել մի քանի կերպար և դուրս չգալ թղթի սահմաններից, միաժամանակ օգտվել տարբեր գույներից և այլն:

Բնականաբար, այս տարիքում ընտրված թեմաները պետք է լինեն շատ պարզ և անհրաժեշտության դեպքում ունենան նմուշօրինակներ, որոնք, սակայն, նկարելու ընթացքում չպետք է լինեն երեխաների տեսադաշտում: Նկարչության այս տեսակի ժամանակ երեխաներն աստիճանաբար սովորում են, որ մոտ կանգնած տնակն ու ծառերն ավելի մեծ և բարձր են երևում, իսկ հեռվում կանգնածները՝ փոքր: Սյուժետային նկարչության ժամանակ թեմաները պետք է բխեն երեխաների՝ նախկինում ձեռք բերած

գիտելիքներից, տեղեկություններից, ծանոթ հեքիաթներից և մուլտֆիլմերից: Նույն նպատակը դրվում է նաև ստեղծագործական նկարչության դեպքում, միայն այս պարագայում ավելանում է նաև երեխայի երևակայությունը, ստեղծագործական միտքը:

Նախադպրոցական տարիքում երեխան իր տպավորությունները սիրով և հեշտությամբ արտահայտում է ծեփի միջոցով: Նա առարկաները կերպարանավորում է ծեփոնի՝ պլաստիլինի, աղի խմորի, կավի և բնական նյութերի օգնությամբ: Այդ նյութերը մշտապես պետք է հասանելի լինեն երեխային: Բայց այդքանը բավարար չէ. պետք է զարգացնել փոքրիկի երևակայությունը, ստեղծագործական կարողությունները, սովորեցնել և ցույց տալ ծեփելու ձևերը, տեխնիկան, զարգացնել ձևի, մեծության, գույնի, ռիթմի ընկալումները:

3-4 տարեկանները կերպարվեստի պարապմունքներին ծեփում են փոքր կտորներով՝ կիրառելով ծեփելու հետևյալ եղանակները. • ծեփոնը տրորել և թուլացնել ձեռքերի ափերով, մատներով, • ձեռքերի շրջանաձև գործողություններով գնդերի պատրաստում, • ձեռքերի ափերը վերև-ներքև շփելու գործողություններով գլանների, սյուների, կարկանդակների ծեփում, • փոքրիկ գնդիկները մատների սեղմումով տափակեցնելու գործողություններ, • հարթ մակերևույթին ծեփոնի գլանիկները մատներով սեղմելով տարածելու գործողություններ (օրինակ՝ արևի ճառագայթները), • մատների սեղմումով ծեփոնի ծայրերը իրար միացնելու գործողություններ (օրինակ՝ օղաբլիթ ստանալիս գլանաձև ծեփոնի երկու ծայրերի միացումը), • ցուցամատի և բութ մատի սեղմումով ստանալ լրացուցիչ մասնիկներ (օրինակ՝ կտուց, պոչ, ականջ), • սեղմումով երկու մասեր իրար միացնել (օրինակ՝ ձնեմարդու երկու գունդ- հատվածների միացումը), • ափերի և մատների սեղմումով ծեփոնը տախտակի վրա տափակեցնել և տարածել (օրինակ՝ մարգագետին կամ խոտ ծեփելը), • մատների հպումներով հարթացնել ծեփոնը, • սեղմումով ծեփոնն ինչ-որ ձևի մեջ տեղավորել և լցնել, • ծեփոնի ամբողջական կտորից քաշելով, ձգելով, սեղմելով, նոր մաս ստանալ (օրինակ՝ ամբողջից գլուխ ստանալը), • մատների սեղմումով ծեփոնի մակերեսին փոսեր ստանալ (օրինակ՝ ափսե, բաժակ պատրաստելիս):

Պարապմունքի համար բացի ծեփոնից (պլաստիլին, կավ, աղի խմոր) անհրաժեշտ են նաև այլ պարագաներ. փայտիկներ՝ աչքեր, բերան, կետեր և այլն փորելու համար և բնական նյութեր՝ ոսպի, բրնձի, լոբու հատիկներ, տերևներ, ճյուղեր, կաղին, կոն և այլն:

Ապլիկացիայի պարապմունքները նպաստում են երեխայի՝ շրջակա միջավայրի հետ շփման, երևակայության, ինքնուրույնության, կոկիկության, աշխատասիրության, աշխատանքն ավարտին հասցնելու կարողության զարգացմանը: Ցանկալի է ապլիկացիայի պարապմունքներն անցկացնել ծեփի պարապմունքներից հետո, որպեսզի երեխան ապլիկացիայի ժամանակ կատարի այն, ինչը պատրաստել է ծեփի պարապմունքին: Ապլիկացիայի պարապմունքները ներառում են հետևյալ քայլերը.

• խաղային շարժառիթի ստեղծում՝ երեխաների մեջ հետաքրքրություն առաջացնելու և զգացմունքային դրական մթնոլորտ ապահովելու համար (հանելուկ, բանաստեղծություն, երգ, խաղային իրավիճակ, հեքիաթային հերոսի, խաղալիքի, խաղի կամ տոնի համար նախատեսված ինչ-որ մի բան և այլն),

• ապլիկացիայի համար նախատեսված առարկայի դիտում, սոսնձելու քայլերի հերթականության և տեխնիկայի ճշտում, սոսնձելու համար նախատեսված մասերի դասավորում թղթի վրա և սոսնձում, • սոսնձված պատկերին լրացուցիչ աշխատանքի միջոցով (գունավորել, լրացուցիչ մասնիկներ նկարել կամ սոսնձել) վերջնական տեսք տալ,

• ավարտուն աշխատանքների դիտում (վերջիններիս միայն դրական գնահատական է տրվում, երեխաները պետք է հիանան արդյունքով և սովորեն գնահատել իրենց աշխատանքները):

Կա ապլիկացիայի երեք տեսակ՝ առարկայական, սյուժետային և դեկորատիվ. Ապլիկացիայի պարապմունքների համար անհրաժեշտ են գունավոր թղթեր, նկարչական ալբոմի թուղթ կամ գունավոր ստվարաթուղթ, սոսինձ, վրձին, կտորե անձեռոցիկ (լաթ), գունավոր մատիտներ, ջրաներկ, չորացած տերևներ: Շինարարական նյութերով կառուցողական աշխատանքները լիովին համապատասխանում են երեխաների հետաքրքրություններին, ունակություններին ու հնարավորություններին, քանի որ համարվում են բացառապես մանկական գործունեություն: Դրա շնորհիվ երեխաները կարողանում են ծավալել մտավոր և գեղագիտական-ստեղծագործական գործու նեություն: Եթե երեխաները լավ են կարողանում կառուցել, ուրեմն լավ են զարգացած նրանց մանր մկանային շարժումները (մանր մոտորիկա), ինչի արդյունքում լավ է զարգանում նաև նրանց խոսքը, քանզի ձեռքի մատների մանր (նուրբ) շարժումների կարողությունն անմիջականորեն կապված է գլխուղեղի խոսքի կենտրոնի հետ: Նման երեխաները հետագայում շատ լավ են տիրապետում նաև գրելու տեխնիկային:

Կրտսեր 2-րդ խումբ (3-4 տարեկան) Կրտսեր նախադպրոցական տարիքում նկարչությունը կարելի է դիտել որպես ինքնատիպ խաղ: Դա է պատճառը, որ սովորեցնելով երեխային նկարել՝ չպետք է նրան զրկել ինքնուրույնությունից, այլ

նպաստել ազատ ու ստեղծագործ աշխարհընկալմանը: 3-4 տարեկան երեխաների կերպարվեստի պարապմունքների նպատակն է՝ • Հետաքրքրություն հարուցել նկարչության, ծեփի, ապլիկացիայի, կառուցողական աշխատանքների նկատմամբ: • Զնավորել՝ առարկայի ձևը, գույնը տեսնելու, զգալու և վերարտադրելու կարողություն: • Երեխաների մեջ զարգացնել գեղեցիկի ընկալումներ, գեղագիտական զգացմունքներ, պատկերացումներ:

Կերպարվեստի պարապմունքների խնդիրը՝ *Նկարչություն* • ճիշտ բռնել մատիտը և տանել հորիզոնական, ուղղահայաց, ալիքաձև, թեք գծեր, • մատիտի օգնությամբ մեկ գծով կամ կետ-գծերով նկարել կծիկ, շղթաներ, քառակուսի, խոտ, ցողուն և այլն՝ առանց մատիտը թղթից պոկելու, • կարողանալ ճիշտ բռնել վրձինը, • վրձնով տանել հորիզոնական, ուղղահայաց, ալիքաձև, թեք գծեր, անել վրձնահպումներ, • ճիշտ օգտվել գույներից, • տարբերակել երեք հիմնական գույները՝ կարմիր, դեղին, կապույտ (միաժամանակ սկսել աշխատել նաև այլ գույներով):

Ծեփ՝ • սիրով աշխատել ծեփանյութով, • հետաքրքրություն դրսևորել պլաստիլինի, աղի խմորի և կավի հետ աշխատելիս, • կիրառել ծեփելու տարբեր եղանակներ՝ ծեփանյութի տրորում, բացում, հարթեցում, սեղմում, • կարողանալ ստանալ ցանկալի մեծություն, • սեղմումով միացնել առարկայի ծայրերը, մասերը, • ափերի սեղմումով կլոր ձևեր ստանալ, • կարողանալ զարդարել, գունավորել իր պատրաստած առարկաները, • կարողանալ ծեփոնից փոքրիկ մասնիկներ պատրաստել և ամրացնել առարկայի մակերեսին, • կոկիկ օգտվել ծեփանյութից. ծեփել տախտակին, չկեղտոտել շորերը, հատակը, մաքրել ձեռքերը, • ուրախանալ անհատական և ընդհանուր աշխատանքի արդյունքից:

Ապլիկացիա՝ • ընտրել սոսնձվող առարկային համապատասխանող գույնը, • գտնել սոսնձելու հերթականությունը (սկզբում տրված բոլոր մասերը դասավորել թղթի վրա և ստանալ առարկայի ամբողջական պատկերը, հետո հերթով սոսնձել դրանք թղթին), • սոսնձել պարզ առարկաներ՝ տերև, երկրաչափական պատկեր, միրգ և այլն, • սոսնձել 2-3 մասերից բաղկացած պատկերներ՝ լուսամփոփ, տնակ և այլն, • գունավոր

մատիտներով զարդարել սոսնձված պատկերը, • առաջադրանքը հասցնել ավարտին, • ուրախանալ արդյունքով և սիրով իր աշխատանքը ներկայացնել մյուսներին:

Միջին խումբ (4-5 տարեկան). Կերպարվեստի պարապմունքների բովանդակությունը միջին խմբում կրտսեր 2-րդ խմբի համեմատությամբ փոքր-ինչ բարդանում է: Այն է՝ գծերի տեսակների, գույնի, ձևի, ռիթմի միջոցով թղթի վրա ավելի լիարժեք պատկերներ ստանալ, նպաստել ձեռքի վարժ շարժումների զարգացմանը: Ձևավորել ու ամրապնդել պատկերացումներն առարկայի ձևի (շրջան, ձվածիր, քառակուսի, եռանկյուն, ուղղանկյուն) մեծության, դիրքի, կառուցվածքի վերաբերյալ:

4-5 տարեկան երեխաների կերպարվեստի պարապմունքների նպատակն է՝ • Շարունակել զարգացնել երեխաների հետաքրքրությունը կերպարվեստային գործունեության տեսակների նկատմամբ, տարբեր արտահայտամիջոցներով միևնույն ձևը կամ կերպարը վերարտադրելու ունակությունները: • Երեխաների ուշադրությունը հրավիրել տարբեր առարկաներին բնորոշ հատկությունների՝ դրանց ձևերի, ուրվագծի, առանձին մասերի, գույների, նախշերի և գեղարվեստական արտահայտչականության վրա:

Կերպարվեստի պարապմունքների խնդիրը Նկարչություն • Շարունակել ծանոթացնել մատիտի հնարավորություններին (սովորեցնել ճիշտ բռնել մատիտը և տանել հորիզոնական, ուղղահայաց, ալիքաձև, թեք գծեր), • մատիտով կատարել վարժություններ՝ գծելով ուղիղ, զիգզագ, կոր, աղեղիկներ, կետեր, • մատիտի օգնությամբ մեկ գծով կամ կետագծով նկարել կծիկ, շղթաներ, քառակուսի, խոտ, ցողուն և այլն՝ առանց մատիտը թղթից պոկելու, • կարողանալ ճիշտ բռնել վրձինը, • վրձնով տանել հորիզոնական, ուղղահայաց, ալիքաձև, թեք գծեր, անել վրձնահպումներ, • թղթի վրա կատարել ազատ և վստահ վրձնահարվածներ, • աշխատանքի վերջում վրձինը լվանալ, չորացնել և սրբել չոր լաթով, • ճիշտ օգտվել գույներից, • տարբերակել երեք հիմնական գույները՝ կարմիր, դեղին, կապույտ (միաժամանակ սկսել աշխատել նաև այլ գույներով), • հավասարաչափ ներկել պահանջվող մակերեսը, ստանալ երանգավրված գունային մակերես:

Ծեփ • Սիրով աշխատել ծեփանյութով, • հետաքրքրություն դրսևորել պլաստիլինի, աղի խմորի և կավի հետ աշխատելիս, • ծանոթ լինել պլաստիլինի և կավի հատկություններին, • կիրառել ծեփելու տարբեր եղանակներ՝ ծեփանյութի տրորում, բացում, հարթեցում, սեղմում, ձեռքերի ափերով շրջանաձև և ուղիղ շարժումներով գլանաձև և գնդաձև առարկաների պատրաստում, • կարողանալ ստանալ ցանկալի մեծություն, • սեղմումով միացնել առարկայի ծայրերը, մասերը, • ափերի սեղմումով կլոր ձևեր ստանալ, • կարողանալ զարդարել, գունավորել իր պատրաստած առարկաները, • աշխատելիս համատեղել ծեփոնը և բնական նյութերը՝ ցանկալի արդյունք ստանալու համար, • կարողանալ ծեփել 2-3 մասից բաղկացած առարկաներ, • կարողանալ ծեփոնից փոքրիկ մասնիկներ պատրաստել և ամրացնել առարկայի մակերեսին, • կոկիկ օգտվել ծեփանյութից. ծեփել տախտակին, չկեղտոտել շորերը, հատակը, մաքրել ձեռքերը, • ուրախանալ անհատական և ընդհանուր աշխատանքի արդյունքից:

Ապլիկացիա • Ընտրել սոսնձվող առարկային համապատասխանող գույնը, • գտնել սոսնձելու հերթականությունը (սկզբում տրված բոլոր մասերը դասավորել թղթի վրա և ստանալ առարկայի ամբողջական պատկերը, հետո հերթով սոսնձել դրանք թղթին), • կոկիկ, առանց լղոզելու սոսնձել (սկզբում պատկերը շրջված դնել թղթի վրա, վրձինը սոսնձոտել և սոսինձը բարակ շերտով պատկերի կենտրոնից տարածել դեպի ծայրերը, հետո պատկերի ծայրից զգույշ բռնելով շրջել այն և դնել՝ փակցնելու համար նախատեսված մասում, վերջում սեղմել, որ ամրանա), • սոսնձել պարզ առարկաներ՝ տերև, երկրաչափական պատկեր, միրգ և այլն, • սոսնձել 2-3 մասերից բաղկացած պատկերներ՝ լուսամփոփ, տնակ և այլն, • պատրաստի երկրաչափական պատկերներից ստեղծել զարդանախշեր, • գունավոր մատիտներով զարդարել սոսնձված պատկերը, • առաջադրանքը հասցնել ավարտին, • ուրախանալ արդյունքով և սիրով իր աշխատանքը ներկայացնել մյուսներին, • իմանալ սոնձելու և սոսնձից օգտվելու ձևերը:

Ավագ խումբ (5-6 տարեկան) 5-6 տարեկան երեխաների կերպարվեստի պարապ-մունքների նպատակն է՝ • Երեխաների կերպարվեստային գործունեության զարգացումը նրանց տարիքային առանձնահատկություններին համապատասխանող և գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող նյութերի հիման վրա: • Երեխաների

գեղագիտական ընկալման, գեղագիտական ճաշակի, իրականության երևույթների և առարկաների նկատմամբ հուզական-զգայական վերաբերմունքի զարգացումն ու կատարելագործումը: • Երեխաների մեջ կերպարվեստի նկատմամբ սիրո և հետաքրքրության ձևավորումը:

Կերպարվեստի պարապմունքների խնդիրը *Նկարչություն* • Շարունակել ծանոթացնել մատիտի, վրձնի հնարավորություններին (վրձնով տանել հորիզոնական, ուղղահայաց, ալիքաձև, թեք գծեր, անել վրձնահպումներ), • ներկը վերցնել անհրաժեշտ չափով, ավելորդ մասը սեղմել պնակի եզրին, • թղթի վրա կատարել ազատ և վստահ վրձնահարվածներ, • աշխատանքի վերջում վրձինը լվանալ, չորացնել և սրբել չոր լաթով, ճիշտ օգտվել գույներից, • սովորեցնել տարբերել հակադիր գույները, • բացի հիմնական գույներից (կարմիր, դեղին, կապույտ) սկսել աշխատել նաև այլ գույներով, • հավասարաչափ ներկել պահանջվող մակերեսը, ստանալ երանգավորված գունային մակերես, • նկարելիս կարողանալ ընդունել աշխատանքային ճիշտ դիրք, աշխատել ինքնուրույն և որոշակի տեմպով:

Ծեփ • Ծեփել ծանոթ առարկաներ և խաղալիքներ, • կարողանալ օգտվել կերտաձողից, • շարունակել կիրառել ծեփելու տարբեր եղանակներ՝ ծեփանյութի տրորում, բացում, հարթեցում, սեղմում, ձեռքերի ափերով շրջանաձև և ուղիղ շարժումներով գլանաձև և գնդաձև առարկաների պատրաստում, • սեղմումով միացնել առարկայի ծայրերը, մասերը, • ափերի սեղմումով կլոր ձևերից ստանալ տափակ

առարկաներ, • մատների սեղմումով խորություններ կամ արտահայտված մասնիկներ ստանալ, • ծեփոնի ամբողջական կտորից քաշելով, ձգելով, սեղմելով նոր մաս ստանալ (օրինակ՝ ամբողջից գլուխ ստանալը), • ծեփել 4-5 մասից բաղկացած առարկաներ, • ստեղծել տարբեր առարկաներ և միավորել դրանք ընդհանուր կոմպոզիցիայի մեջ՝ օգտվելով արդեն ծանոթ ծեփակերտման եղանակներից և հնարներից, • կոկիկ օգտվել ծեփանյութից. ծեփել տախտակին, չկեղտոտել շորերը, հատակը, մաքրել ձեռքերը, • ուրախանալ անհատական և ընդհանուր աշխատանքի արդյունքից:

Ապլիկացիա • Ընտրել սոսնձվող առարկային համապատասխանող գույնը, • գտնել սոսնձելու հերթականությունը (սկզբում տրված բոլոր մասերը դասավորել թղթի վրա և ստանալ առարկայի ամբողջական պատկերը, հետո հերթով սոսնձել դրանք թղթին), կոկիկ, առանց լղոզելու սոսնձել (սկզբում պատկերը շրջված դնել թղթի վրա, վրձինը սոսնձոտել և սոսինձը բարակ շերտով պատկերի կենտրոնից տարածել դեպի ծայրերը, հետո պատկերի ծայրից զգույշ բռնելով շրջել այն և դնել՝ փակցնելու համար նախատեսված մասում, վերջում սեղմել, որ ամրանա), • սոսնձել 4-5 մասերից բաղկացած պատկերներ, • ստեղծել հետաքրքիր կոմպոզիցիաներ • պատրաստի երկրաչափական պատկերներից ստեղծել զարդանախշեր, • մկրատը ճիշտ բռնելով՝ թուղթը կտրել ուղիղ գծով և անկյունագծով (քառակուսի, ուղղանկյուն), առաջադրանքը հասցնել ավարտին, • տարբեր արտահայտչամիջոցներով ընդգծել պատկերի բնորոշ հատկանիշները, • սոսնձված պատկերին վերջնական տեսք տալ լրացուցիչ աշխատանքի միջոցով (գունավորել, լրացուցիչ մասնիկներ նկարել կամ սոսնձել):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, կերպարվեստի դասավանդման նպատակներն են

ա) ազգային և համամարդկային մշակույթի ճանաչումը, ուսումնասիրումը, պահպանումը, տարածումը և զարգացումը արվեստների ուսուցման և գեղագիտական դաստիարակության ճանապարհով.

բ) հասարակության կողմից մշակույթի՝ որպես զարգացման միջոցի գիտակցումը.

գ) հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման պայմանների ստեղծումը.

դ) արվեստի և մշակույթի բնագավառներում Հայաստանում ձևավորված գեղարվեստական կրթության ավանդույթների պահպանումն ու զարգացումը, համապատասխանեցումը նոր տնտեսական հարաբերություններին, ժամանակակից պահանջներին և միջազգային կրթական չափորոշիչներին:

Կերպարվեստի չափորոշիչները ապահովում են կերպարվեստի ուսուցման միատեսակ վերջնական արդյունք՝ սովորողների գաղափարական գիտակցության, աշխատանքային և գեղագիտական դաստիարակության, ճաշակի զարգացման, բնության, պատմական և մշակութային հուշարձանների պահպանության գիտակցության ձևավորման, ինչպես նաև հոգևոր և բարոյական մի շարք խնդիրների լուծման գործընթացներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք.
2. Եղիազարյան Ա. Կ., Զարդարվեստը հանրակրթական դպրոցում դեկորատիվ-կիրառական արվեստի ուսուցման օրինակով), Երևան, §Մանկավարժե հրատ., 2002
3. «Նախադպրոցական մանկավարժություն» - Երևան 2008 թ. /Ս. Մարության, Ա. Դալլաքյան/
4. «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար» - Երևան 2020 /Հ. Միտոյան/
5. «Մանկապարտեզի վաղ հասակի առաջին և երկրորդ խմբերի (կյանքի առաջին և երկրորդ տարի) կրթական համալիր ծրագիր» - Երևան 2012 թ. /Ա. Հովհաննիսյան, Ս. Մարության և ուրիշներ/
6. «Մանկապարտեզի կրտսեր առաջին խմբի /2-3 տարեկանների/ կրթական համալիր ծրագիր» /- Երևան 2012թ. /Հ. Միտոյան, Ս. Մարության և ուրիշներ/
7. «Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի /3-4 տարեկանների/ կրթական համալիր ծրագիր» - Երևան 2011 թ. /Ա. Հովհաննիսյան, Հ. Մինասյան և ուրիշներ/
8. «Մանկապարտեզի միջին խմբի /4-5 տարեկանների/ կրթական համալիր ծրագիր» - Երևան 2011 թ. /Հ. Միտոյան, Ս. Մարության և ուրիշներ/
9. Кузин В.С. Изобразительное искусство и методика его преподавание – 3-е изд., перераб. и доп. – М.: Изд-во Агар, 1998. – 336 с.
10. Лихачев Б.Т. Воспитательные аспекты обучения. - М.: Просвещение, 1978. - с.

11. Ростов Н. Н., Методика преподавания изобразительного искусства, М., ”Школа”, 2000, с. 25